ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08.01.2020թ.

Ժամը 11^{30}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,

գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը:

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

Բացակայում էր՝ ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ. Անտոնյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 *19.12.2019թ.-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխանության եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չուներ, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են:*

1.2 20.12.2019թ. կայացրած նիստում «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված)՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրին (տեխնիկական բնութագրին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալ դեպքի.***

- «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերում բացակայում են ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերություններով նախատեսված «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից՝ **20.12.2019թ.**-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

08.01.2020թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվեցին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները և հանձնաժողովը մասնակցի որակավորման փաստաթղթերը գնահատեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակցի տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջինիս հայտարարել ընտրված մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/19» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11⁰⁰-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Նազարյան

Գնահատող Վ. Վահանյան

Գնահատող Հ. Ավետիսյան

Գնումները համակարգող Լ. Թազայան